

Մոնթրեալի Հայ Կեդրոնին մէջ կայացաւ նախարար Մելանի Ժոլիի նուիրահաւաքը



Մարտ 29-ի երեկոյեան, Մոնթրեալի Հայ Կեդրոնի ճաշարահին մէջ կայացաւ Փանատայի ժողովրդական նախարար Մելանի Ժոլիի կողմէ կազմակերպուած նուիրահաւաքը: Յատուկ ընդունելութեան ներկայ էին Փանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբի, Մոնթրեալի եւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբերու, ՀՕՄ-ի, Համագլխայինի, ՀՄԸՄ-ի եւ այլ միութիւններու ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի Յուշակոթողի Բացում Անթիլիասի Մայրավանքին Մէջ



Կարդալ էջ 4



Always standing by our community

SINCE 1997

Komitas.ca
FUNERAL COMPLEX

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

T 514.331.0400

ԵՐԵՎԱՆԻ, 24 ԱՊՐԻԼ 2018

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ ՕԹԹԱՌՈՒԱՅԻ ՄԷՋ

ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅ ԿԵԴՐՈՆՆԵՐԸՆ
ՄՈՆԹՐԵԱԼ ԵՒ ԼԱՎԱԼ առաւօտեան ժամը 9:00-ին
ԹՈՐՈՆՏՕ առաւօտեան ժամը 6:00-ին
ԳԵՄՊՐԻԾ առաւօտեան ժամը 5:30-ին




2018 PILOT

MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA

Les saveurs de la méditerranannée...
le bon goût du partage !



Suivez-nous !

www.groupeadonis.ca



MARCHÉ
ADONIS

Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ Զաւախքի եւ Լոռիի ի նպաստ զօրակցական հանդիսութիւն

Շաբաթ, 17 Մարտ 2018-ին, երեկոյեան ժամը 8-ին, Թորոնթոյի Հայ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Զաւախքի եւ Լոռիի ի նպաստ զօրակցական հանդիսութիւն, կազմակերպութեամբ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի «Լոռի-Զաւախք» յանձնախումբին, հովանաւորութեամբ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան եւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան Կեդրոնական վարչութեան, ներկայութեամբ Գանատայի Թեմի առաջնորդական փոխանորդ Տէր Գեղարք Ծ. Վրդ Քրիստօֆեանի՝ հոգեւոր հովիւ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տէր Խաչատրեանի, Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչներ ընկ. Նորայր Պէրպէրեանի եւ ընկ. Վարանդ Պարսամեանի, ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան անդամներ ընկ. Սիլվի Օհանեանի եւ ընկ. Նաթալի Մանուկեանի, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ ընկ. Վարսենիկ Սարգիսեանի, ԳեՄ-ի Շրջանային վարչութեան անդամ ընկ. Ալէք Օհանեանի, Օնթարիոյի Պահպանողական կուսակցութեան թեկնածու Արիս Պապիկեանի եւ հանդիսատեսներու հոծ բազմութեան:

Օրուան հանդիսավարն էր ընկ. Ալէք Պարսամեան: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին՝ Սարին Փօլատեան, որ ասմունքեց Վահան Տէրեանի «Երկիր Նայիրի» հաւաքածոյէն համադրուած կտորներ, Համազգայինի «Արցախ» պարի ուսումնարանի մեծերու խումբը, որ հանդէս եկաւ «Սարդարապատ» պարով, ինչպէս նաեւ



«Երեբունի» պարախումբի աղջիկները, որոնք ներկայացուցին «Ծաղկած բալենի» պարը: ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի առաջացուցած Լոռիի եւ Զաւախքի շրջաններու օժանդակութեան եւ հանդանակութեան համակարգիչ յանձնախումբի խօսքը փոխանցեց յանձնախումբի ատենապետ ընկ. Գաբրիէլ Սո-

մունճեան: Օրուան բանախօսն էր վերոնշեալ յանձնախումբի անդամ ընկ. Վիգէն Աբրահամեան, իսկ երեկոն խանդավառեց Հայաստանէն յատուկ այս առթիւ հրաւիրուած սիրուած երգիչ Գէորգ Հաճեան, որ հանդէս եկաւ գուսանական, ազգային եւ յեղափոխական երգերով: Միջոցին տեղի ունեցաւ տեսերիզ-

ներու ցուցադրութիւն. «Դէպի երկիր Զաւախք», ՀՅԴ ԳեՄ-ի կազմակերպած Վանաձորի ճամբարին մասին եւ Լոռիի շրջանի ՀՅԴ-ի վերանորոգուած կեդրոնի բացման արարողութեան մասին: Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցած նուիրատուութիւններէն հանգանակուեցաւ 19 հազար տոլար:



ԵՐԵՐՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2018
Ժողովրդային Հաւաք Օթթաուայի մէջ

Մեկնում Հայ Կեդրոններէ՝
 Մոնթրէալ եւ Լաւալ առ. ժամը 9:00-ին
 Թորոնթօ՝ առաւօտեան ժամը 6:00-ին
 Գեմպրիճ՝ առաւօտեան ժամը 5:30-ին

<p>ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ</p>	<p>ՄՈՆԹՐԵԱՎ-ԼԱՎԱԼ Կիրակի, 22 Ապրիլ 2018 Կ.ե. ժամը 2:00-ին, Parc Marcelin-Wilson, Մոնթրէալ Յեղասպանութեան Յուշարձանին առջեւ</p> <p>ՀԱՍԻԼԹԸՆ Կիրակի, 15 Ապրիլ 2018 Կ.ե. ժամը 2:00-ին Համիլթընի Հայ Կեդրոն</p>	<p>ԹՈՐՈՆԹՕ Կիրակի, 22 Ապրիլ 2018 Կ.ե. ժամը 2:00-ին Թորոնթոյի Հայ Կեդրոն</p> <p>ՍԵՆՅՔ ԳԱԹՐԻՆՉ Կիրակի, 22 Ապրիլ 2018 Կ.ե. ժամը 1:30-ին Սենթ Գաթրիսկի Հայ Կեդրոն</p>	<p>ԳԵՄՊՐԻՃ Կիրակի, 22 Ապրիլ 2018 Կ.ե. ժամը 1:00-ին Գեմպրիճի Հայ Կեդրոն</p> <p>ՎԱՆԳՈՒՎԸՐ Կիրակի, 22 Ապրիլ 2018 Կ.ե. ժամը 2:30-ին Mountain View Celebration Hall, Armenian Genocide Monument- 5455 Fraser Street</p>
--	--	---	--

Երաժշտական ձեռնարկ Համազգայինի «Տաթև» մասնաճիղի կազմակերպությամբ

Մարտ 15-ին, կ. ե. ժամը 7:30-ին տեղի ունեցավ Ռաֆֆի Պեսեյանի երաժշտական ելույթը, կազմակերպությունը Համազգայինի «Տաթև» մասնաճիղին, Գեմպրիճի համալսարանի Conrad Gebel Chapel-էն ներս, մոտ 80 երաժշտասերներու ներկայությամբ: Օրուան հանդիսավարուհի Վերա Զալեան պատշաճ կերպով ներկայացուց յայտագիրը, որ կ'ընդգրկէր երաժշտական կտորներ Բաբաջանեանէն, Կոմիտասէն, Պաղտասարեանէն, Կրչուինէն եւ Ռահմանինովէն, որոնք դաշնակի վրայ վարպետութեն պիտի նուագուէին Ռաֆֆի Պեսեյանի կողմէ:

Ռաֆֆի ուսումը ստացած է Երևանի Պետական համալսարանի Կոմիտաս անունան հերաժշտանոցին մէջ, տիրանալով դոկտորական տիտղոսին եւ աշակերտելով համբաւաւոր երաժիշտներու, ապա ուսումը շարունակած է ԱՄՆ-ի Rowan համալսարանէն ներս եւ դարձած դասատու՝ Ամերիկեան համալսարաններու մէջ, միաժամանակ որպէս համբաւաւոր դաշնակահար, ելույթներ ունեցած է աշխարհի զանազան երկրներու մէջ:

Ռաֆֆի բեմ բարձրանալով նուագեց վերոյիշեալ կտորները՝ մեծապէս հմայելով ներկաները եւ արժանանալով անոնց ծափող ջոխերուն: Ձեռնարկին աւարտին Համազգայինի վարչութեան կողմէ Իզապէլ Գաբրիան-Չըրչիլի «Like our mountains» հատորը նուիրուեցաւ արուեստագէտին, որմէ ետք ներկաները առիթ ունեցան մասնաճիղին իրեն եւ յայտնելու իրենց գնահատանքը:

Կ. Հանգէտան

Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի Յուշակոթողի Բացում Անթիլիասի Մայրավանքին Մէջ




Photo by Markar

«Այս Յուշակոթողը Անլուրի Զանգակատունն է՝ Մեր Հայրենիքին Ու Արցախին Անկախութիւնը, Մեր Ժողովուրդին Ազատութիւնը Աւետող» Հաստատեց Արամ Ա. Կաթողիկոս

Հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին եւ ներկայութեամբ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի, երէկ՝ չորեքշաբթի, 21 մարտի երեկոյեան, Անթիլիասի մայրավանքի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի յուշակոթողի պաշտօնական բացումը:

«Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին առիթով բարձրացած այս յուշակոթողը անլուրի զանգակատունն է մեր ժողովուրդի զաւակներուն եւ համայն մարդկութեան մեր հայրենիքին ու Արցախին անկախութիւնը, մեր ժողովուրդին ազատութիւնը աւետող, այս յուշակոթողը սիրոյ եւ երախտագիտութեան շօշափելի արտայայտութիւնն է այն բոլոր հայորդիներուն, որոնք մտքով, գրիչով, խօսքով, քրտինքով, ծառայութեամբ եւ արեամբ անկախութիւն կերտեցին՝ Արցախէն սկսեալ մինչեւ Արարատեան դաշտ: Անիկա գնահատանքի, սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւնն է այն բոլոր հերոսներուն նկատմամբ, որոնք իրենց արիւնը թափեցին Հայաստանի եւ Արցախի անկախութեան ճամբուն վրայ», ըսաւ վեհափառ հայրապետը:

Արամ Ա. կաթողիկոս նշեց, որ անկախութեան համար կանգնեցուած յուշակոթողը կազմուած է երեք ամրակուռ սիւներէ՝ Հայաստան, Արցախ եւ սփիւռք, որոնք միասնաբար անբաժան ու անբաժանելի երրորդութիւնն են, որոնք կը բարձրանան դէպի երկինք, անմահութիւնն եւ յաղթանակ՝ աւելցնելով, որ այդպէս պէտք է ըլլայ հայութիւնը՝ մէկ ամբողջութիւն, միաձուլուած ու միակամ:

 Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website www.arsarmenianschool.ca


 **AETERNA**
Complexe funéraire • Crématorium
Funeral Complex • Crematorium

ComplexeAeterna.com
514 228-1888


FOR A CONTEMPORARY CEREMONY
New alternative in funeral services in Montreal

POUR UNE CÉRÉMONIE CONTEMPORAINE
Nouvelle alternative dans le domaine funéraire à Montréal



 **Aline Shnorhokian**
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com



Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7 

ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596
*certaines conditions s'appliquent

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!

 **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** 

 **Kevork Asadourian** 

Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

 **École De Conduite**

 **Driving School**

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

 **NATALIE SKAFF, CPA, CGA**
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

 **CLASSIC GRILL**

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000





NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

Թորոնթոյի մէջ Աշուեսաւ ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի 55-ամեայ յոբելեանը

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղը իր 55-ամեայ յոբելեանը նշեց Կիրակի, 28 Յունուար 2018-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Հայ Երիտասարդական Համագործակցութեան Կենտրոնի սրահէն ներս, ներկայութեամբ ՀՕՄ-ուհիներու, Համակիրներու, քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ հոգեւոր դասին:

Հանգիստութիւնը սկսաւ Գանատայի, Հայաստանի եւ ՀՕՄ-ի քայլերգներով: Դաշնամուրի նուագակցութեամբ՝ Մարիա Տաւուտեանի, որմէ ետք օրուան հանդիսավար ընկՏ. Յասմիկ Պապեան բացման խօսքով հանդէս եկաւ, որուն մէջ անդրադարձաւ ՀՕՄ-ի նուիրական առաքելութեան եւ երախտագիտական զգացումները փոխանցեց երէց ՀՕՄ-ուհիներուն, որոնք անսակարկ նուիրուածով ծառայած են ՀՕՄ-ի յարկէն ներս:

Գեղարուեստական յայտագիրը սկսաւ ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի 7-րդ եւ 8-րդ կարգերու աշակերտներուն կողմէ պատրաստուած «Գովք Հայաստանի» պեղարուեստական ներկայացումով (ասմուր, պար եւ երգ), նուագի ընկերակցութեամբ (Flute-ով) Ներսէս Ամիրխանեանի: Ապա վարչութեան խօսքը փոխանցեց «Ռուբինա» մասնաճիւղի ատենապետ ընկՏ. Իսեն Թիւրմեանը, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, յայտնեց, թէ մասնաճիւղս 400-է աւելի անդամներով կը շարունակէ իր գործունէութիւնը եւ հաւատարիմ է ՀՕՄ-ի առաքելութեան: Ան անդրադարձաւ ՀՕՄ-ի նպատակին ու տարած ծառայողական մեծածաւալ տարբեր աշխատանքներուն, շնորհակալութիւն յայտնեց ՀՕՄ-ուհիներուն, կոչ ուղղեց վերանորոգելու իրենց ուխտը եւ շարունակելու «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» նշանաբանով առաջնորդուած աշխատանքները:

Այս տարուան 55-ամեայ յոբելեանական հանգիստութեան ներկայ եղաւ մասնաճիւղի հիմնադիր ընկերուհիներէն ընկՏ. Արմենուհի Գոլոյեանը, որուն



ծաղկեփունջ նուիրուեցաւ վարչութեան ատենապետուհիին ձեռամբ: Ան իր սրտի խօսքին մէջ ՀՕՄ-ը նմանցուց մշակի, որ յանուն մեր գաղութին եւ ողջ աշխարհին՝ ցանած է ու տակաւին պիտի շարունակէ ցանել ծառայութեան ոգին մեր թոռներուն ու ծոռներուն մէջ, եւ կոչ ուղղեց երիտասարդութեան, որ հեռու չմնան, դան եւ միանան այս սքանչելի կազմակերպութեան, որ կը կոչուի ՀՕՄ, «Պատիւ զգացէք ՀՕՄ-ուհի ըլլալով», աւելցուց ան:

Գեղարուեստական յայտագրին 2-րդ մասով հանդէս եկաւ երգչուհի Սոնա Յովսէփեան, որ իր թաւշային ձայնով ներկայացուց «Նազանք» կտորը (երաժշտութիւն Ռ. Պետրոսեանի) եւ «Երեւան» (երաժշտութիւն Ալվազեանի), դաշնամուրի ընկերակցութեամբ Թալին Արթիւնեան Գրլըպոգեանի:

Օրուան պատգամը փոխանցեց պրն. Մհեր Գարագաշեանը, որ յատկապէս հրաւիրուած էր Մոնթրէալէն: Պրն. Գարագաշեան ծնած է Պէյրութ, Լիբանան եւ հաստատուած է Մոնթրէալ, բեմադրիչ, դերասան, հայերէնի ուսուցիչ, երեք գիրքերու հեղինակ: Ան ներկայիս ուսուցչութեան առընթեր, կը վարէ Ս. Յակոբ Ազգային վարժարանի հայեցի դաստիարակութեան պատասխանատուի պաշտօնը, ատենապետն է Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի Ոգեկոչման Գանատայի մարմնին եւ անդամ է ՀՅԳ Գանատայի Կեդրոնական կոմիտէին: Ան իր խօսքին մէջ ներկայացուց ՀՀ-ի 100-

ամեայ պատմականը՝ ընդգծելով ՀՕՄ-ին կատարած դերը՝ ազգին նեցուկ կանգնելու: Ան կոչ ուղղեց նոր սերունդին փոխանցելու ՀՕՄ-ի ճառագայթող ոսկի սիրտը, որ անպայման պիտի առաջնորդէ մեզ դէպի յաղթանակ:

Հանգիստութեան իրենց մասնակցութիւնը բերին Մարիա Տաւուտեան (դաշնամուր), Նշան Փափագեան (Ջութակ) եւ Գէորգ Մանուկեան (Փողային): Երեքն ալ Սուրիոյ երաժշտանոցներէն շրջանաւարտ, գեղեցիկօրէն նուագեցին «Կոունկներ» (երաժշտութիւն Ն. Աւետիսեանի), «Պոռլի-Պոռլի» (երաժշտութեան Սայաթ Նովայի) կտորները: Գեղարուեստական յայտագրին աւարտին մասնակիցները գնահատուեցան ծաղկեփունջերով եւ խոսասլփիկներով: Անկէ ետք 50, 35, 25 եւ 15 տարիներու անդամակցութեան համար զարգասեղներ ստացան արժանաւոր ընկերուհիներ:

Մասնաճիւղս հաստատած է համալսարանական կրթաթոշակի մրցանակներ, գնահատելու եւ քաջալերելու համալսարանական փայլուն հայ ուսանողներ: Այս տարի այդ մրցանակները ստացան Արագ Տէր Օհան, Մհեր Գարագաշեան, Սեւան Պէքմէզեան, Սարգիս Կրտսեան, Մարիա Մարտիրոսեան, «Դրօ Նաճարեան» կրթաթոշակի մրցանակին արժանացաւ Առէն Մնացականեան, իսկ ՀՕՄ-ի կամաւոր երիտասարդ մրցանակ ստացաւ Ալիք Օհանեան: Յատուկ պարգեւատրման արժանացան ընկերուհիներ Տիանա Հանրմեան, Յասմիկ Բարխեան եւ Ստե-



լա Մայրոսեան իսկ Թորոնթոյի գաղութէն՝ պրն. Վանիկ Յովհաննէսեան:

ՀՕՄ-ի շարքերուն միացան 9 նորագրեալներ, որոնք իրենց ուխտը կատարեցին ընկՏ. տրքթ. Իգապէլ Գարբիէլեան Չըրչիլի կնքամայրութեամբ: Ձեռնարկը փակուեցաւ Տէր Կոմիտաս Աւագ Բահանայ Փանոսեանի «Պահպանիչ»ով:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ աւանդութիւն դարձած 55-ամեակի կարկանդակի հատուած եւ մոմավառութիւն, որուն ընթացքին երէց ընկՏ. Թագուհի Թաճեան իր մոմով վառեց կրտսեր ընկՏ. Արագ Պոյաճեանի մոմը, եւ երկուքով մոմերը գետեղեցին կարկանդակին վրայ: Ապա ընկերուհիներ մօտենալով վառեցին իրենց մոմերը եւ կատարեցին իրենց նուիրատուութիւնները:

Մարալ Փափագեան Գիրագեան

Հորիզոն www.horizonweekly.ca

Ghadir Meat & Restaurant
T. 416-750-7404
F. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS
OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 6AM - 6PM
SUNDAY 9AM - 3PM
LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine
1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5
Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant
905.761.6484
1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
Sales Representative
Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)
Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries
2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.
Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2
Tel.: 416.449.2040
Fax: 416.449.2048

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - ԺԱ.

Գլուխ Երրորդ
1915 - Վան-Բուլանուխ-Մալազկերտ
4. Մեծ Նահանջը

Այսպէս կոչուեցաւ 1915-ի յուլիս 23-ի նահանջը: Ռուսական բանակն ու հայկական կամաւորական գունդերն իրենց աչքերը դարձուցին դէպի Կովկաս ճիշդ այն վայրկեանին, երբ Մուշի կառավարիչը ճիւղաւորներու ծրագրով մը հրահանգեց մէջ կը խեղդէր աննամայ Մշոյ դաշտի ժողովուրդը. երբ Քանի եւ Հանտոքի վրայ Սասնոյ եւ Տարօնի մարտիկներն օրհասական կռիւ կը մղէին, երբ Մուշ քաղաքը հերոսական դիմադրութիւն մը ցոյց կուտար ու թնդանօթի հարուածներէն քանդուած իր սեփական տան փլահատակներուն տակ կը թաղուէր...

Գրաւորած վայրերէն ժողովուրդը կը նահանջէր երեք ուղղութեամբ: Բուլանուխ-Մալազկերտի ազգաբնակչութիւնը բռնեց Ալաշկերտի ճանապարհը՝ Արարատ հասնելու համար: Վանի ժողովուրդը քաղց Բերկրի-Բայազիտ ճանապարհով դէպի Իգտիր: Սակայն Բերկրիի ճանապարհը կտրուեցաւ Ալատաղի քրդերու կողմէ, ու Վանի ուշացած ժողովուրդի մէկ մասը, Քեռու եւ Համազասպի գունդերուն հետ, ստիպուեցաւ դառնալ դէպի պարսկական Ատրպատական:

Այս երեք ուղղութեամբ նահանջող ժողովուրդի թիւը 150,000-էն աւելի էր: Կամաւորական բոլոր գունդերու գինուորները միասին առած՝ 5000-ի կը հասնէր: Ատոնց վրայ պէտք է աւելցնել 3000-ի չափ ալ գինուած ժողովուրդ, որ կրցած էր օգտուիլ բանակներու ներկայութենէն ու գինուիլ Հնարաւոր միջոցներով:

Նահանջի պարագային մեր գլխաւոր մտահոգութիւնն ժողովուրդն ապահով տեղ մը հասցնելն էր: Բուլանուխ-Մալազկերտի շրջանը գուրկ էր օրինական որեւէ գինական ուժէ. այդ պատճառով մենք ստիպուեցանք ամփոփել մեր բոլոր գործիչ եւ գինուոր ընկերները մէկ պարտականութեան շուրջ: Ըլլալ ժողովուրդի յառաջապահն ու վերջապահը: Զինեալ փոքրիկ խմբակով սպասել վտանգուած վայրերու մէջ, մինչեւ ժողովուրդն ամբողջ անցնի. կարգ ու կանոն պահպանել ժողովուրդի մէջ, ու ստիպել անոնց որ իրարու օգնեն. հաւաքել թափուած երախաներն ու անկար կիները՝ ապահով սննդատու կայաններ հասցնելու համար: Բուլանուխի Կորէն մինչեւ Մէլզը, թնդանօթի եւ գնդապետներու կրակին տակ, ժողովուրդը փոխադրեցինք աճապարանքով, բայց այնպիսի կանոնաւորութեամբ մը, որ անկախ իր հետ կրցաւ առնել հնարաւոր չափով, ճամբու անհրաժեշտ պէտքերը: Բուլանուխ-Մալազկերտի հասարակական գործիչները կատարեալ համերաշխութեամբ եւ համագործակցութեամբ կրցան ժողովուրդը հասցնել Ալաշկերտի դաշտը, առանց որեւէ վնասի. ու անկէ ալ Իգտիր, կտրել անցնելով 250-300 քիլոմէթր երկար ճանապարհ մը, տասն օրուայ ընթացքին:

Ալաշկերտի շրջանն աւելի կազմակերպուած էր, ու մենք ճանապարհին կրցանք գտնել քանի մը սննդատու կայաններ: Իսկ շարք մը վայրերու մէջ կազմակերպեցին նորեր: Իգտիրի մէջ մեզ կը դիմաւորէին բազմաթիւ մարմիններ: Ժողովուրդն Աւետեաց երկրէն եկող հայաստանցուն կ'ընդունէր գրկաբաց: Բայց օգնութեան գործը կանոնաւոր կազմակերպուած չէր. անպակաս էին խաչաձեւումներ, որոնք շատ անգամ տխուր հետեւանքներու դուռ կը բանային:

Նահանջի առաջին օրերուն սկանաւոր եղանք

շատ ցաւալի երեւոյթի մը, որ առաջ կուգար թրքական սարսափներէն: Գիշերային նահանջի ժամանակ, շատ մը յոգնած ու սարսափած մայրեր ճանապարհէն դուրս կ'ելնէին, իրենց մանկիկն արցունքով ու համբոյրով կ'օծէին, ու քարի մը, կամ թուփի մը տակ դնելով՝ կը հեռանային, իրենց կեանքի փրկութեան մասին մտածելով: Այդպիսի երախաներ գտանք ու սալ ունեցողներու միջոցաւ փոխադրեցինք դէպի Ալաշկերտ:


Շատ անգամ հայ գիւղացին անգուլթ անտարբերութեամբ մը կ'անցնէր լքուած երախայի մը կամ գետին ինկած կնոջ մը քովէն, եւ միայն գործիչներու ստիպողութեան տակ, անիկա յանձն կ'առնէր օգնութեան հասնիլ այդ անկարներուն: Թնդանօթի սարսափի ենթակայ մարդու մը այս անձնասիրութիւնն այնքան ալ մեղադրելի չէ: Սակայն շատ յաճախ սկանաւոր կ'ըլլայինք սիրտ շարժող այնպիսի գոհոգութիւններու, որ յայտ կը բերէր հայ գիւղացին, իր կեանքի գնով, փրկելու մանուկ մը, կին մը, վիրաւոր երիտասարդ մը: Շատ անգամ տեսայ այրած դէմքով հայ գիւղացուն ու կնոջ, որ իրենց բռունցքը ուղղած դէպի երկինք, կ'ըսէին. «Աստուած, դուն չկա՛ս երկինքի մէջ...» ու գերագոյն անձնագոհութեամբ մը, իրենց անձին միայն վստահելով, շրջապատի աղէտը կ'ամբռնէին:

Երեւանէն շարք մը պատասխանատու գործիչներ փութացած էին Իգտիր դիմաւորելու ժողովուրդն ու նահանջող գինեալ ուժերը: Խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ հոգ Արմէն-Գարոյի նախագահութեամբ, եւ որոշուեցաւ օգնական ուժեր դրկել Վանի ճանապարհի ամբողջ երկարութեամբ, ոչ միայն ժողովուրդի օգնելու, այլ նաեւ վտանգուած գիծերը պաշտպանելու: Բերկրիի կամուրջի փակուելու տխուր լուրը հասած էր Իգտիր: Այդ որոշումը գրեթէ չգործադրուեցաւ: Հագիւ փոքրիկ խումբ մը բարձրացաւ Մասիսի ստորոտներէն անցնող ճանապարհի երկայնքը, մնացածը թողուեցաւ իր բաղդին: Այդպիսի գործի մը համար հայկական կամաւորական գնդերն էին որ դեր մը պիտի կրնային կատարել. սակայն անոնք ալ անկանոն ու ժողովրդախառն նահանջի մը ենթակայ էին:

Դրոն կրցած էր իր գունդի գլխաւոր զօրամասերը պահել Բայազիտ Աղա (որ 25-30 քիլոմէթր հեռու էր Բերկրիէն) եւ Գաւրէ Շամէ: Քեռու եւ Համազասպի գունդերու մասին տեղեկութիւն չկար: Անդրանիկի եւ Վարդանի ուժերը քայքայուած էին եւ ցրուած ժողովրդական հոծ գանգուածի մէջ ու կը նահանջէին անկանոն կերպով:

Մալազկերտէն հագիւ հասած էինք Իգտիր, ու ինքզինքնիս կը գտնէինք աւելի մտահոգիչ խնդիրներու առջեւ: Շարք մը ընկերներու խորհուրդով, Բասէնի մէջ նախապէս գործող իմ երեք ընկերներու հետ մեկնեցայ դէպի Գաւրէ Շամէ: Հոգ խորհրդակցութիւն մը ունեցանք Դրոյի հետ, ու միասին մեկնեցանք Բայազիտ Աղա, ուր վերջապահ կը մնային Դրոյի ձիաւորները:

Անդրանիկ, կասկածէ դուրս է, որ լաւ կուտող էր եւ կրնար գինուորական ոգի ներշնչել: Սակայն անիկա անպէտք մարդ կը դառնար, երբ խնդիրը նահանջելուն կուգար: Միշտ դիտուած էր, որ Անդրանիկ, նահանջի պարագային, կը բարկանար, կը թողուր իր զօրամասերը, կը քայքայէր իր շրջապատը, ու առանց շունչ առնելու՝ կը հասնէր նահանջի վերջին կէտին: Այս նահանջին, Անդրանիկի գունդը, որ թերեւս ամենէն զօրաւորն էր, քայքայուած ամբոխ մը դարձաւ Արճէշէն սկսած: Մենք հին Բայազիտի դաշտին մէջ (Իգտիրէն 40 քիլո-



մէթր հեռու) հանդիպեցանք Արամին, Անդրանիկին, Վարդանին, Սմբատին եւ ուրիշներուն, որոնք դէպի Իգտիր կ'երթային: Անոնցմէ անցնելէն յետոյ մեզի հանդիպեցան գինուորներ, ոստիկաններ, ժողովուրդ, որքեր, ու թափուած երախաներ:

Նահանջը վանեցիներու համար եղաւ դժնդակ: Գիւղացիները գոնէ փոխադրական միջոցներունէն, կամ վարժ էին չարքաշուութեան: Իսկ Վանի քաղաքի ժողովուրդն ուղղակի արգահատելի տեսարան մը կը պարզէր Իգտիրէն մինչեւ Բայազիտ Աղա: Այդ նահանջն անմոռանալի պիտի մնայ վանեցիներու համար իր տաժանքներով եւ Բերկրիի կամուրջի անասելի աղէտով:

Բայազիտ Աղայէն կարելի եղաւ ստուգել, որ Քեռին եւ Համազասպ հասած են մինչեւ Բերկրի, կուռի բռնուած են, ու տեսնելով որ ճանապարհը կտրուած է, փոխած են իրենց նահանջի գիծը: Դրոյի ձիաւորները շարք մը կրցան պահել Բայազիտ Աղան, ու այդպիսով ապահովեցին նահանջող ժողովուրդի թիկունքը: Ժողովուրդն արդէն իջած էր Արարատեան դաշտը, երբ մենք թողուցինք Բայազիտ Աղան, ուր գօզաքներու զօրամաս մը դրկուած էր հայկական ուժը փոխարինելու:

Մեր վերագարձը մինչեւ Իգտիր, դժնդակ ապրումներու շարան մ'եղաւ: Ծանապարհի ամբողջ երկայնքին մեռնողներու ուռած դիակներ կային: Ամբողջ ժողովուրդի մը ողջ մարմինը քաշքշուած էր ձորերէն ու լեռներէն, ու իր մարմնի ու արեան հետքերը սփռած էր այդ ամայի վայրերուն մէջ: Ամենէն խոր ու անմոռանալի յիշողութիւններ կը պահեմ լքուած մանուկներէն: Անոնք լքուած ու անտէր կը մնային քարի մը տակ, ջուրի մը եզերքը, տակաւին չմեռած, կը նուային յաւիտեանական ողբով մը: Մէկը չորցած ոսկոր մը կրծած մաշեցուցած էր, բայց տակաւին ձեռքի մէջ կը պահէր. միւսը ձեռքը հասած չարոխի մը կտորը կը ծամէր, ուրիշ մը մահուան ջերմէն կը հեւար: Հապա՛ ուրիշ մը, վախցած նապաստակի պէս, բայց անոյժ շարժուելու, անտարբեր կը նայէր իր կողքին մեռած փոքրիկին:

Ձիաւորներու այս յետնապահ խումբը փրկարար աշխատանք մը կատարեց: Ամէն մէկ գինուոր, մէկ կամ երկու մանուկ իր գրկին մէջ, հարիւրաւոր այսպիսի հոգիներ հասցուցին աւելի ապահով կայաններ, ու կրկին դարձան հաւաքելու, եթէ առաջին անգամ չէին կրցած բոլորը փոխադրել:

Այս արհաւիրքէն յետոյ, հայոց ղեկավար տարրը, շատ երկար ատեն հոգեմաշ վիճակ մ'ապրեցաւ: Իսկ ժողովուրդը, դժբաղդաբար 30,000-ով հալեցաւ էջմիածնի մէջ, ենթակայ ըլլալով տարափոխիկ հիւանդութիւններու: Ժողովուրդի այն մասը որ գիւղերու մէջ մնաց, քիչ մ'աւելի ցրուեցաւ Հայաստանի զանազան կողմերը, ու կրցաւ փրկուիլ: Իսկ Վանի շրջանի ժողովուրդի մեծ մասը ապաստանեցաւ էջմիածին եւ անոր անտառը: Օգնութեան մարմիններ կային: Սակայն ժողովուրդը տարապայաման յոգնութեան ու սնունդի պակասէն բռնուեցաւ հիւանդութիւններու, որոնց առաջը չկրցանք առնել, ու ժողովուրդը կոտորակուեցաւ:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ, 24 ԱՊՐԻԼ 2018

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԲՈՒՄՈՒՄԻ ՄԷՋ

ՄԵԿՆՈՒՄ ՀԱՅ ԿԵՂՈՆՆԵՐԸՆ
ՍՈՆԹՐԵԱԼ ԵՒ ԼԱՄԱԼ առաւօտեան ժամը 9:00-ին
ԹՈՐՈՆԹՕ առաւօտեան ժամը 6:00-ին
ԳԵՄՊՐԻԾ առաւօտեան ժամը 5:30-ին

ANI BAKERY

ԱՆԻ ՓՈՒԴՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատր՝ Արսեն Տապապաղեան

Ուր կը գտնէք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցէք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)



Ghadir
Meat & Restaurant

Մեր յարգոյ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHADIR մտալիաճառատունն ու ճաշարանը փոխադրուած է աւելի բնդարձակ և յարմարաւտ կեդրոն մը՝ նորագոյն և յաւազոյն ձեւով ծառայելու մեր յաճախորդներուն:

Մեր ճաշարանէն ներս կը պատարկուին միջին արևելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մկնիչ, պանիրով պօրթկ, հաւու և կովու միսով շատրմա, հաւու եւ կովու միսով խարոված, մսաշոր, չի բոֆթ, լման հաւու խորոված, աւճախ եւ այլ տեսակի աղանդերներ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ՝
1848 Lawrence Avenue East
Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶՍՅՆ՝
(416) 750-7404 կամ (416) 750-7400





ՀԱՅԿԱԿԱՆ
ՑԵՂԱՍԳՐԱՆՈՒԹԻՒՆ
ARMENIAN GENOCIDE

24.04.18

AT 12:00 -ին

ՄԻԱՍՄԻՆ
TOGETHER!

OTTAWA





**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչև ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

Ս. Յակոբ Եկեղեցոյ
Հոգարարձույթիւնը եւ դպրոցի
տնօրէնութիւնը մեծ հաճոյքով կը
հրաւիրեն ձեզի



ՍՈՒՐԲ ԾԱԿՈՐ
ԱՅԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆ
Վ. Ե. Ա. ՄԱՐԱՖԻԱՆ ԿԱՐՄԱՐԱՆԻ
ԲԱՍՏԱՐԱՃԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Ի Նպաստ Սուրբ Յակոբ Ազգային
Վարժարանի
Վ. Ե. Ա. Մարաֆեան Կարմալկաբարանի
Եւ Բաստրմաճեան Երկրորդականի

Շարաք.
→ **14 ԱՊՐԻԼ** 2018
Երեկոյան ժամը 6:30 ին


Մոնթրէալի Հայ Կեդրոն

Տեղեկութեանց եւ տեղեր
ապահովելու հասար դիմել
Սենա Մանուկեանին 514-830-3205
foundation@ccolesourphagop.com

Կը խնդրենք որ ձեր
ներկայութիւնը հաստատեք մինչև
6 Մարտի 2018

Մուտքը նուիրատուութեանը
Տուրքը գերծ կացուցման տուցազիր՝
50\$ եւ վեր նուիրատուութեան

*Վճարագրքները (cheque) գրել Fondation
L'École arménienne Sourp Hagop սնունտի սակ



ՄԱՆՐԱՆԿԱՐ Ժողովը չսկսած

Հաւաքուած ենք հերթական ժողովի։

Դեռ չենք սկսած։ Քիչ մը եւս կը սպասէ ատենապետը, որպէսզի ուշացողներն ալ ժամանեն։

Կը նայիմ շուրջս․ հինե՛ր, նորե՛ր․ զանազան ասպարէզներէ, բարձրագոյն վկայականներով, կամ միթէ՞ առանց որեւէ վկայականի (այսօր հաւանաբար այլեւս գրեթէ անհնար), զանազան երկիրներէ եկած, զանազան մտայնութիւններով։ Առաջ իւրաքանչիւրը անուև–մականուևով կը ճանչնայիր։ Հիմա դժուար է, երբեմն նոյնիսկ քեզի ամենէն ծանօթ ընկերոջ անուևը չես յիշեր ու քովինիդ կը հարցնես…։ Բոլորը սիրելի դէմքեր են, կասկած չկայ։

Կը գրուցեն, կը պատմեն, կը փոխանակեն անձ–նական վերջին լուրերը։ Մի քանին հարցեր ունին, անպայման պիտի բարձրացնեն ժողովի ատեն․ մտահոգ են, հաշիւ պիտի պահանջեն, իրենց տեսակէտները անվհատ պիտի պաշտպանեն։ Ուրիշներ լո՛ւտ պիտի հետեւին գեկոյցներուն, թերեւս մի քանին՝ մի՛շտ նոյները, հարցումներ պիտի ուղղեն զեկուցաբերին կամ մարմինին։

Ոմանք կ’երթան սուրճ մը առնելու ետեւը դրուած սեղանին վրայէն․ կաթնային լուսանիշը կանաչ է, այսինքն սուրճը պատրաստ է։ Սուրճը առած՝ մինչեւ իրենց աթոռը հասնին, խօսքի կը բռնուին ասոր կամ անոր հետ։ Շատեր չեն տեսած ատենէ մը ի վեր։

— Ինչպէ՞ս ես կամ ինչպէ՞ս եղար, ընկե՛ր— հարց

կու տան իրարու։

Մտերմիկ այս խօսակցութիւններու ձայնը կարծես փխորժալուր երաժշտութիւն մը ըլլայ, կը լեցնէ՛ սրահը․ նախերգանքը ժողովին։

Զիրար տեսնելը կարեւորութիւն մը կը ստանայ։ Զիրար վերագտնելը՝ ա՛լ աւելի։ Համակեցութեան (symbiosis) զգացում մը կը տիրէ մթնոլորտին մէջ։ Եզակի համակեցութիւն մը։

Այո, իսկապէս եզակի համակեցութիւն մը, որ այլուր չես գտներ։

Մասնակից եմ շատ ժողովներու՝ տարբեր բնոյթի․ տարբեր նպատակներով, տարբեր օրակարգերով գումաւրուող ժողովներու։ Իւրաքանչիւրը իր իւրայատկութիւններով կրնայ յատկանշուիլ։ Կը հաւաքուինք, ներկայացուող հարցերը կը լուծենք, որոշումներ կը կայացունենք, ժողովը կը փակենք եւ տուն կ’երթանք։

Նոյնը չէ այստեղ։ Կը թուի, թէ այս ժողովները չեն փակուիր, նոյնիսկ եթէ «Մշա՛կ, բանուո՛ր»–ով կ’աւարտին անոնք։ Կը շարունակուին, կ’երկարին, մասնակիցներուն կ’ընկերանան մինչեւ տուն, կը յամենան իրենց երազներուն մէջ, իրենց երակներո՛ւն մէջ, կը յամենան մինչեւ յաջորդ հանդիպում…

Իսկ ասիկա նոյնն է, ո՛ր որ ալ գտնուիս, ո՛ր քաղաքը կամ քաղաքամասն ալ որ գումարուի ժողովը․ ո՛ր երկիրն ալ որ ըլլայ։

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիսէ Անթիլիաս Փոխադրութիւնը

«ԱՐՏԱՌՈՑ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ»

2

Սուլթանական «իրատէ»ով հաստատուած էր «նոր կանոնագիր»ը, պատրիարքութիւնները եւ կաթողիկոսութիւնները միացուած էին⁷⁶⁶, Աթոռանիստ որոշուած էր Սրբոց Յակովբեանց Վանքը, եւ Սահակ Կաթողիկոսն ալ նշանակուած էր «նոր պաշտօն»ին վրայ⁷⁶⁷։

Կաթողիկոսը Միաբանական Ընդհանուր Ժողովին հաղորդած էր Նախարարական հեռագիրը, որ բռնադատութիւն մըն էր։ Միաբանութիւնը արձանագրած էր հեռագրին պարունակութիւնը, եւ որոշած պատգամաւորութեամբ մը ներկայանալ Հայրապետին, շնորհաւորել զինք ու հրաւիրել, որ ան «տարիներէ ի վեր թափուր մնացած պատրիարքական Աթոռը» բարձրասնայ։ Կաթողիկոսը շնորհակարանքին պատասխանած էր, ըսելով․ «ես ուրախ չեմ այս նոր եւ անակնկալ պաշտօնիս վերայ», եւ աւելցուցած՝ «եթէ սովորական վիճակի մէջ ըլլայինք, անտարակոյս չէի համարձակեր բարձրագոյն հրամանին, քանի որ նոյնիսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ իբրեւ բողոք՝ տարիներով հրաժարեալ կը ստորագրէի Կառավարական եւ Ազգային յարաբերութեանց մէջ, սակայն ներկայ տագնապներուն մէջ, նոր եւ մեծագոյն տագնապի մը առիթ չըլլալու համար, մանաւանդ վտարանդի ազգիս օգտակար ըլլալու յուսով (...) կամայ–ակամայ խոնարհեցայ նոր խաչին տակ։ Եղէք կիւրենացիներ…»⁷⁶⁸։

3 Օգոստոսին, Արդարադատութեան եւ Կրօնից Նախարարութենէն հեռագիր մը եւս ղրկուած էր, որով տեղեկացուած էր, թէ ըստ «նոր կանոնագիր»ի սրամազրութեան, Պոլսոյ Պատրիարք՝ Զաւէն Արքեպիսկոպոսի պաշտօնը վերջացած էր։ Հեռագիրը «ստիպողաբար» յանձնարարած էր նաեւ, թէ Կաթողիկոսը եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն մէկը իրեն փոխանորդ նշանակէր, որպէսզի Կ. Պոլսոյ «ժողովրդեան կրօնական գործերը երեսի վրայ չմնան»⁷⁶⁹։ Կաթողիկոսը խորհրդակցելով Օրմանեան արքեպիսկոպոսի հետ՝ Գաբրիէլ արք․ ձէվահիրճեանը նշանակած էր Կաթողիկոսական փոխանորդ, եւ հեռագրելով նշանակումը հաղորդած անոր եւ Նախարարութեան⁷⁷⁰։

6 Օգոստոսի երեկոյեան ժամերգութեան ատեն, Կաթողիկոսը Յորենաթաղի յարկաբաժնէն փոխադրուած էր Մայր Տաճար եւ «Հրաշափառ»ով մուտք գործած։ Այն առիթով արտասանած իր խօսքին մէջ ըսած է․ «Տարագրութեանս մէջ Կայսերական Կառավարութեան անակնուկելի եւ վճռական տնօրէնութիւնը մեզ հաղորդուած օրէն կը մտածեմ, թէ արդեօք Ս. Յակոբի մատուցած ծառայութեանցս ի վա՞րճ, թէ ի պատիժ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնիս վրայ աւելցուեցան Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ բազմաբեռն Պատիրարքութեանց պարտաւորութիւնները։ Թերեւս գտնուին փառքի հմայքէ բռնուողներ, որ վարձատրութիւն համարեն, մտցնանտարակոյս եմ, թէ հեռակախ եւ խորաթափանց մտքեր՝ բար պաշտօններու անչափելի պատասխանատուութիւնը կըսադատելով կարեկից հոգւով պիտի նային մեր վրայ, եւ զմեզ սարսափի, շփոթի եւ խռովքի մատնող պարագայից մէջ միակ զօրավիգս եւ սփոփանքս պիտի ըլլայ այդ անկեղծ կարեկցութիւնը (...) Աթոռք յաճախ փուշի անդաստաններ եւ դաւերու ու

Ո՞ւր է գաղտնիքը արդեօք։

Կարգապահութիւն մը կայ, որ կապ չունի կանոնադրային կարգապահական յօդուածներուն հետ։

Հաւատարմութիւն մը կայ, որ կապ չունի օրէնքներու կամ որոշումներու ենթարկուելուն հետ։

Ներքին զգացում մըն է, առնչում մը, որ անքակտելի է։ Նկատած եմ, որ անքակտելի է նոյնիսկ երբ ենթական այս կամ այն պատճառաւ բաժնուած է՝ հեռացած է, հեռացուած է։ Անգամ մը որ մասնակցած ես այս ժողովներուն, անկէ ետք, նոյնիսկ եթէ «պատժուած» ես, համակեցութեան այդ զգացումը կ’ապրի հետդ մինչեւ մահ։ Սկիզբը դառնութեան զգացում մը կրնայ պատել քեզ, հրասթափութեա՛ն՝ ոչ միայն հեռացողին պարագային, այլ մնացողին ալ, բայց յետոյ հարագատութեան զգացումը կը յաղթէ։ Գիտես, որ նոյն աղբիւրէն ջուր խմած էք, ինքն ալ, դո՛ւն ալ՝ պատանեկութեա՛ն օրերէն շատ հաւանաբար։

Ի՞նչ հրաշագործ ջուր է այդ, որ կը մոռցնէ ժխտական զգացումները, միշտ կը բազմապատկէ դրական՝ զգացումները…

— Ընկերնե՛ր, գրաւեցէք ձեր տեղերը, ժողովը պիտի սկսինք,— բարձրախօսէն կը լսուի ատենապետին ձայնը։

Բայց ժողովը սկսած էր արդէն…

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

